ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ՕՐՈՔ

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ

Հայկական եկեղեցական ճարտարապետության մեղ հասած հնագույն կառույց Էջմիածնի Մայր տաճարը, հիմնադրվելով և կառուցվելով 301–303 թթ. ս. Գրիգոր Լուսավորչի և ս. Տրդատ Գ Արշակունի թագավորի կողմից, դարերի ընթացքում բազմիցս վերանորոգվել է և վերակառուցվել, որի հետևանքով փոփոխվել են նրա հատակագծային ու ծավալատարածական ձևերը:

Մայր տաճարի լուսավորչաշեն կառույցի հորինվածքի վերաբերյալ տարբեր տեսակետներ կան. եռանավ բազիլիկա (Թ. Թորամանյան[1], Ա. Սահինյան[2]), ուղղանկյուն, քառամույթ գմբեթավոր (Ա. Երեմյան[3], Ա. Խաչատրյան[4]), խաչի վրա կանգնեցված քառասյուն ամպհովանի (Ստ. Մնացականյան)[5], սկզբից ևեթ կառուցվել է ներկայիս հորինվածքով (Վ. Գրիգորյան)[6]:

Ի տարբերություն Հայաստանի վաղ միջնադարի եկեղեցիների մեծամասնության, Էջմիածնի Մայր տաճարի թե՛ կառուցման, թե՛ վերակառուցումների մասին համեմատաբար մանրամասն տեղեկություններ են հայտնում ինչպես IV–VII դդ., այնպես էլ հետագայի հայ պատմիչները:

Մայր տաճարի տեղի ընտրության և կառուցման մասին առաջին տեղեկությունն Ագաթանգեղոսի մոտ է: Ս. Գրիգոր Լուսավորիչը «... ղնկաաեալ տեղին տանն Աստուծոյ չինեաց, զցուցելն նմա ի տեսլեանն, զյառաջագոյն դրոշմեալն իւր, և կանգնեաց անդ զեկեղեցին Քրիստոսի»[7]: Ագաթանգեղոսի «Պատմության» այս հատվածի աշխարհաբար թարգմանությունը «...նշանակված տեղում եկեղեցի չինեց՝ տեսիլքի մեջ իրեն ցույց տրված...»[8] երկիմաստ բնույթ ունի: Այն կարելի է մեկնաբանել թե՛ որպես տեղի, թե՛ որպես տաճարի հորինվածքի ընտրության թելադրանք:

---

[1] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. հ. Ա, Երևան, 1942, էջ 211:*

[2] *Ա. Ս ա հ ի ն յ ա ն. Էջմիածնի Մայր տաճարի սկզբնական տեսքը.– «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 71–93:*

[3] А. Е р е м я н. Храм Рипсимэ. Ереван, 1955, с. 80.

[4] A. K h a t c h a t r i a n. L'architecture armenienne du IVe au VIe siecle. Paris, 1971, p. 67–93.

[5] Ст. М н а ц а к а н я н. Вопросы формирования Эчмиадзинского Кафедрала в контексте эволюции крестовокупольных систем.– "Историко-филологический журнал", 1987, № 1, с. 147–158:

[6] *Վ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Էջմիածնի Մայր տաճարը.– «Լրաբեր հաս. գիտ.», 1986, № 7, էջ 77–85:*

[7] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Հայոց պատմություն, գլ. ՃԻ, 841, Երևան, 1983, էջ 468:*

[8] *Նույն տեղում, էջ 469:*

Իսկ ս. Գրիգոր Լուսավորչին տեսիլքում պատկերվել էր չորս սյուների միջև ձգվող կամարների վրա բարձրացող գմբեթ. «Եւ ի չորեցունց սեանցն ի վերայ խաչիցն կամարք ղարմանատեսք ի միմեանս կապեցան. և ի վերայ այնորիկ տեսի գմբեթաձև խորանարգ ամպեղէն շինուած աստուածակերտ ղարմանալի»[9]: Սակայն պատմիչի հայտնած տեղեկությունը տաճարի կառուցման վերաբերյալ ս. Գրիգոր Լուսավորչին վերուստ տրված հրահանգի մասին, վերաբերում է միայն տեղի ընտրությանը. դա լրացուցիչ հիմնավորվում է նաև Ագաթանգեղոսի «Պատմության» մի այլ գրվագով. «Շինեսջիր զտաճար անուանն Աստուծոյ ի տեղւոջն որ ցուցաւ քեզ»[10]:

Ամենաուշագրավը, սակայն, այն է, որ Էջմիածնի Մայր տաճարի 1950-ական թթ. պեղումներն ի հայտ բերեցին, որ իսկապես, լուսավորչաշեն կառույցը եղել է չորս մույթերի վրա բարձրացող գմբեթով: Պեղումների ընթացքում բացվեցին IV դ. գմբեթակիր մույթերի խաչաձև խարիսխները, Ավագ խորանի տակ ուրարտական կոթող և նախնական խորանը: Ենթադրյալ բազիլիկայի հետքերը չհայտնաբերվեցին. դա նշանակում է, որ Էջմիածնի Մայր տաճարն ի սկզբանե եղել է գմբեթավոր աշխարհում առաջին գմբեթավոր եկեղեցին ընդհանրապես:

Մայր տաճարի նախնական կառույցից պահպանվել են հյուսիսային և արևելյան պատերի հատվածները, անկյուններում մոդուլյոններով քիվերով փոքրիկ ճակտոնները, հյուսիսային պատին ս. Պողոս առաքյալին և ս. Թեկլեին պատկերող հունարեն մակագրություններով երկու հարթաքանդակ և շրջանի մեջ ներգծված հավասարաթև խաչ, թևերի երկու կողմում թռչուններ: Այս պատկերաքանդակները քրիստոնյա Հայաստանի քանդակագործական արվեստի վաղագույն նմուշներից են:

Հայկական ճարտարապետության պատմության մասնագետներից շատերի մոտ ընդունված է այն տեսակետը, թե Էջմիածնի Մայր տաճարը ավերվել է 360-ական թվականներին Պարսից Շապուհ II արքայի Հայաստան կատարած ներխուժման ժամանակ: Նման կարծիքի համար հիմք են ծառայում Փավստոս Բուզանդի այն խոսքերը, որ պարսիկները «Առնուին և զՎաղարշապատ քաղաք, քանդեին բրէին զքաղաքն ի հիմնաց տապալէին... Ընդ ամենայն քաղաքս ոչ թողին ամենայն շինած. զի ամենայն տապալէին, քակեալ քանդէին»[11]:

Ենթադրվում է, որ Էջմիածնի Մայր տաճարն այդ ավերածություններից հետո նորոգել է ս. Ներսես Ա Մեծը (353–373): Նա, ըստ Փավստոս Բուզանդի, վերանորոգել է Հայաստանի պատերազմից ավերված բոլոր եկեղեցիները[12]: IV դ. վերջում, V դ. սկզբում Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման մասին տեղեկություն կա Ագաթանգեղոսի «Պատմության» Փարիզի ազգային գրադարանում պահվող ձեռագրի հիշատակարանում, 1254 թ. Եղնիկ Երեցի կողմից գրված հայ կաթողիկոսների ժամանակագրությունում, ըստ որի ս. Սահակ Ա Պարթևը (388–439) «...նորոգեաց

---

[9] Նույն տեղում, գլ. ՃԲ, 737, էջ 418:

[10] Նույն տեղում, գլ. ՃԲ, 755, էջ 424:

[11] Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Հայոց պատմություն. դպր Դ, գլ. Ծե, Երևան, 1947, էջ 236:

[12] Նույն տեղում, էջ 236:

զտուն Աստուծոյ՝ այսինքն զսուրբ եկեղեցին: Զի Մեծին Գրիգորի եղեալ էր զհիմն զայն, որպէս և ցուցեալ էր տեսլեանն երեւեցելոյ»: Եղնիկ Երեցի ժամանակագրությունը որպես հավելված տպագրված է Սամուել Անեցու «Պատմության» հրատարակության վերջում[13]*, և ճարտարապետության պատմությանը նվիրված մի շարք ուսումնասիրություններում այն վերագրվել է Անեցուն:*



ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ. Ա – այժմյան հատակագիծը,
Բ – հատակագիծը 484 թ. վերակառուցումից հետո, Գ – լուսավորչաշեն
կառույցի գմբեթակիր մույթը, Դ – հնագույն պատկերաքանդակները

Մինչև V դ. վերջը միակ հավաստի տեղեկությունն Էջմիածնի Մայր տաճարի մասին, այն էլ սկզբունքային և շատ կարևոր՝ պատկանում է Ղազար Փարպեցուն: Ոչ միայն իրադարձությունների ժամանակակից, այլև ականատես, մասնակից, Էջմիածնի վանահայր պատմիչը հայտնում է 484 թ. Մայր տաճարի հիմնովին վերակառուցման մասին, որն իրականացրել է Հայաստանի կառավարիչ Վահան Մամիկոնյանը պարսից գեմ մղված ազատագրական պայքարի հաջող ավարտից հետո: Իշխանը «...կա-

[13] *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հավաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 267:*

տարևր զսովորական ուխտս և զպատարագս ի սուրբ եկեղեցւոջն Կաթողիկէի, զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեայն իւրոյ»[14]: Ցավոք, Փարպեցին վերակառուցումից հետո Մայր տաճարի ստացած ճարտարապետական կերպարի մասին ոչինչ չի ասում: Այդ հարցն ուսումնասիրողների մոտ տարբեր տեսակետներ կան և հետաքրքրական է, որ Փարպեցու վերը նշված խոսքերն ամենատարբեր կերպով, նույնիսկ տրամագծորեն հակառակ են մեկնաբանվում ճարտարապետության հայ պատմաբանների կողմից: Այսպես, օրինակ, Թ. Թորամանյանը (որին համակարծիք է Ա. Սահինյանը) համարում է, որ, ըստ Փարպեցու տեղեկության, Վահան Մամիկոնյանը «հին շենքն ամբողջովին քանդելով՝ հիմեն ի վեր վերաշինել է» և «հիմնարկեալ նորոգեաց»-ը համազոր է նորը կառուցելուն»[15]: Իսկ Վ. Գրիգորյանը գտնում է, որ «զհնացեալ գործ նախնեացն» վերանորոգումը վերաբերում է եկեղեցի-հաստատությանը, հենց տեքստում նշված ուխտին ու պատարագին, և ոչ թե եկեղեցի—կառույցին[16]: Հետազոտողների մեծ մասը գտնում է, որ V դ. վերակառուցումից հետո Էջմիածնի Մայր տաճարը ստացել է իր այժմյան հատակագծային ու ծավալատարածական հորինվածքը և տաճարի հյուսիսային, հարավային ու արևելյան ճակատների ներսից կիսաշրջանաձև, դրսից բազմանիստ խորանները հավելվել են Վահան Մամիկոնյանի կողմից: Սա հավանական տեսակետ է, որովհետև խորաններն, իրոք, հավելման արդյունք են դա երևում է տեղում (որոշ խորաններ կիսով չափ ծածկել են նախնական կառույցի լուսամուտների երեսակալները): Վերակառուցումից հետո Էջմիածնի Մայր տաճարը դարձել է քառակուսուն մոտ ուղղանկյուն պահլիճ (22,55x20,72 մ ներքին չափերով), որն արևմտյան, հարավային ու հյուսիսային կողմերում ունի արտաքուստ շեշտված խորաններ, իսկ արևելյան դրսից եռանիստ Ավագ խորանի երկու կողմում կան մեկական սվանդատուն: Աղթամարահի կենտրոնում, չորս հաստահեղույս մույթերի վրա ձգվող կամարները կրում են տաճարի դմբեթը:

Ղազար Փարպեցու մոտ կա երկու տեղեկություն ևս. տաճարի մինչ վերակառուցումն ունեցած վիճակի, ինչպես նաև շենքի ծածկի բնույթի վերաբերյալ: Դրանք գտնվում են ոչ թե «Պատմության» տեքստում, այլ երկի Առաջաբանում և «Թուղթ առ Վահան Մամիկոնյան» նամակում: Այսպես, օրինակ, V դ. վերջին քառորդում Մայր տաճարի խարխուլ վիճակը, որով պայմանավորվել է դրա վերակառուցումը, հաստատվում է պատմիչի հետևյալ խոսքերով. «և միանգամ և եղկիցս ջարդեցավ բոլոր կահն յանհաստատութենէ չինուածոյն...»[17]:

Ավելի կարևոր է պատմիչի տեղեկությունը Մայր տաճարի ծածկի մասին: «Պատմության» առաջաբանում նա վշտով նշում է, որ Էջմիածնի Մայրավանքի հետագեմ, ապիկար մարդիկ, նախանձից դրդված, որոշելով վրեժխնդիր լինել Փարպեցուն, հրդեհել են տաճարի փայտե ծածկը. «Պա-

---

[14] Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի. Պատմութիւն Հայոց. գլ. ԺԶ, Թիֆլիս, 1908, էջ 345–346:

[15] Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. Նշվ. աշխ., հ. Բ, 1948, էջ 61:

[16] Վ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Նշվ. աշխ., էջ 80:

[17] Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի. Նշվ. աշխ., էջ 426:

տահեաց նմա կրել տրտմութիւն ի վայրապաը մարդկանց, զի ի հրոյ վնասեալ փայտակերտն եկեղեցվոյն»[18]*: V դ., Փարպեցու օրոք, Մայր տաճարը փայտածածկ լինելու մասին նշում է նաև Սեբեոսը՝ VII դ. Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսը (615–328) «...վերացոյց և զփայտայարկս սրբոյ Կաթուղիկէին, նորոգեաց և զխախուտ որմոյն. չինեաց զքարայարկսն»*[19]*: Բայց պատմիչ կաթողիկոս Հովհաննես Դ Դրասխանակերտցին (898–929) փայտե ծածկի փոխարեն փայտե «գմբեթ» է նշում, ըստ նրա՝ Կոմիտասը «...քակեալ սորա զփայտայարկ գմբէթ սրբոյ Կաթուղիկէին, որ ի Վաղարշապատ քաղաքի՝ չինէ զնա դեղեցկայարմար և չքաղատես կոփածոյ քարամբք»*[20]*: X դ. այս տեղեկությունը հիմք է ծառայել հայ և օտար, հայկական ճարտարապետության պատմությամբ զբաղվող համարյա բոլոր մասնագետների համար այն կարծիքը հայտնելու, որ Վահան Մամիկոնյանի վերակառուցումից հետո Էջմիածնի Մայր տաճարը փայտե գմբեթ է ունեցել: Մեր կարծիքով այդպիսի տեսակետի համար բավարար հիմք չկա. Սեբեոսը, որը բավական որոշակի նշում է, թե ինչ վերանորոգեց Կոմիտասը, չի հիշատակում գմբեթը, որն անկասկած եղել է քարաշեն, խորանարդաձև, ինչպես և այդ տարիներին կառուցված Տեկորի Ս. Սարգիս վկայարանի գմբեթը:*

Ղազար Փարպեցու օրոք և նրա մասնակցությամբ կատարված վերակառուցումից հետո Էջմիածնի Մայր տաճարի այս հորինվածքը VII դ. Հայաստանում կրկնվեց Բագարանի Ա. Թեոդորոս եկեղեցում (624–631) և Բյուզանդիայի միջոցով տարածվեց Եվրոպայում, նախատիպ դառնալով Կոստանդնուպոլսի Նեա (IX դ.), Ֆրանսիայում՝ Օլեանի Ժերմինյի դե Պրե (806–811, ճարտարապետն է հայազգի Օդո լը Մեսսենը), Իտալիայում՝ Միլանի Սան-Սատիրո (868–888), Հունաստանում՝ Աթոս լեռան վանքերի եկեղեցիների համար: Եվ Էջմիածնի Մայր տաճարի խաչաձև-կենտրոնագմբեթ, քառամույթ, քառախորան այս հորինվածքը եղավ հայկական եկեղեցական ճարտարապետության մեծ ավանդը ողջ քրիստոնեական մշակույթում:

АРХИТЕКТУРА ЭЧМИАДЗИНСКОГО КАФЕДРАЛЬНОГО СОБОРА ПРИ ЛАЗАРЕ ПАРПЕЦИ

МУРАД АСРАТЯН

Резюме

Древнейшим дошедшим до нас купольным памятником в Армении является Эчмиадзинский кафедральный собор, построенный, согласно историкам, в 301 – 303 гг. царем Трдатом III и Григорием Просветителем. Пострадавший пос-

[18] *Նույն տեղում, էջ 407:*

[19] *Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն. գլ. ԻԵ, Թիֆլիս, 1913, էջ 142:*

[20] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 75:*

ле нашествия персов собор был восстановлен, по свидетельству историка V в. Лазаря Парбеци, правителем Армении Вааном Мамиконяном в 484 г. В основу плана собора была положена его нынешняя форма – равнокрылый крест, выраженный в организации как внутреннего пространства, так и наружных масс. Гениальное объединение зодчим двух тем центрально-купольной композиции – квадратного плана с куполом на четырех свободных опорах и крестообразного плана – предвосхищает в Эчмиадзинском соборе воплощение этой идеи в созданных позднее подобных памятниках не только в Армении, но и за ее пределами.

THE ARCHITECTURE OF THE ECHMIADZIN CATHEDRAL IN THE TIME OF LAZARUS PARPETSI

MURAD HASRATYAN

S u m m a r y

The Echmiadzin Cathedral, built according to historical records, in 301-303 by King Trdat III and St. Gregory the Illuminator is Armenia's oldest domed structure that has come down to our days. Damaged in a Persian invasion, according to Lazarus Parbetsi, the 5th century historian, the Cathedral was restored by Vahan Mamikonian, the ruler of Armenia, in 484. The Cathedral's present form – a Greek cross manifested in both its interior lay - out and exterior – formed the basis of the Cathedral's plan no later than the 5th century. The architect combined the two lines of the central dome composition – a square plan with a dome supported on four freestanding pillars and a cross plan. This approach predetermined the Echmiadzin Cathedral's role as a precursor of similar structures that were to be built both in Armenia and far beyond.